

կա քիչ յետոյ իր նկարագիրի տկարութիւնը ցոյց կուտայ և գործիք կը դառնայ Կեսարացիի հակառակորդներուն ձեռքը:

«Յովհաննէս վարդապետ Խուշ, կ'ըսէ, զվեզ վարեղոյ յեկեղեցոյն կու ըսէ, կ'ուրախանայ եւ կու ցնծայ յոյժ անճառ խնդութեամբ եւ բերկրայից ուրախութեամբ՝ թէ յիւր կողմն անկելոց եւ՛հ յոչ կ'աւաւ» (էջ 173): Դարանաղցիի, մասնաւորապէս իր անձնական հաշիւներուն ազգին և եկեղեցւոյն շահը զոհած ըլլալը, անկէ յայտնի է որ կ'ըսէ թէ «Աստուծոյ ե գիտելի, որ զնա բնաւ չի ուզեր՝ զԽուշն՝ վասն բազում պատճառաց: Թէ զվեզ ի մեր հալն եր քողեր Կեսարացին, եւ մեծ տախճին (գատախազ) եւ եի Խրուն. յոչ կ'ամայ ընկեր արար զվեզ նորա»:

Արդ եթէ Դարանաղցի անկեղծօրէն Նրուսաղէմ երթալու համար եկած էր և Կ. Պոլսոյ գործերուն չէր ուզեր խառնուիլ՝ պէտք չունէր Խուշին, որուն իբր թէ համակիր չէր և չէր ալ իրաւամբ իր դատարարակութեամբ և ոգւով, և որուն սակայն միացաւ պարզապէս Կեսարացիի դէմ:

Եւ երկարօրէն կը պատմէ — անշուշտ ինքզինքն արդարացնելու համար — այն ջանքեր և հնարական կերպերը, որ Յովհաննէս Խուշըրած է զինքն շահելու համար:

Այս օրերուն՝ 1612 Յունիս 15ին Կ.